ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԸԱՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Մ.Խորենացու 7 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-13/4 ծածկագրով ԲԸԱՀ ընթացակարգի արդյունքում 2013թ-ի դեկտեմբերի 18-ինին կնքված պայմանագրում 2014թ-ի ապրիլի 22-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ 1: անհրաժեշտություն է առաջացել խմբագրել պայմանագրի որոշ դրույթներ:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրից հանվել է պայմանագրի 4.5 կետը:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի առարկա հանդիսացող շինարարական աշխատանքների դեպքում ՀՀ կառավարության 08/05/03թ N 626-Ն որոշման պահանջները կիրառելի չեն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա.Աղաջանյանին:

Հեռախոս՝ 060-544-697:

Էլ. փոստ՝ gnumner@customs.am:

Պատվիրատու՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

18.12.2013 թվականին կնքված N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-13/4

պայմանագրի

ք. Երևան **22/04/2014թ.**

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գևորգյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և <<ԱԳԱԹ-777>> ՍՊԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Դ.Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև Կողմեր, հիմք ընդունելովԿողմերի միջև 18.12.13թ. կնքված N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-13/4 պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 8.4 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1. Կողմերը որոշեցին Պայմանագրից հանել Պայմանագրի 4.5 կետը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, տարածվում է կողմերի միջև 18/12/2013թ.-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՀՀ ԿԱ ՊԵԿ	Կ ա պ ալ ա ռ ու
Ք.Երևան, Խորենացի 7	<<ԱԳԱԹ-777>> ՍՊԸ
ՀՎՀՀ 02591206	Ք.Երևան,Շիրակի փակուղի 4
Հ/Հ 900013574018, 900013202016	Հ/Հ 1150000285850100
Կենտրոնական գանձապետարան	ՀՎՀՀ 01807983
գործառնական վարչություն	Տնօրեն՝ Դ.Եսայան
Աշխ.ղեկավար՝ /Ա.Գևորգյան	.....
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.